

ԼԻԱԶՈՐԱԳԻՐ

**ՀՀ ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ, ՔՄԱՆԸ ՀՈՒՆԻՄԻ
ԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ ՏԱՄՆՀԻՆԳ ԹՎԱԿԱՆԻ**

20.06.2015թ.

Ես՝ **Պետրոս Պետրոսի Պետրոսյանս,**
Ծնված՝ **01.02.1956թ.**
Անձնագիր՝ **AH 0505050, տրված 10.07.2014 թ., 001 -ի կողմից**
Հաշվառված՝ **ՀՀ, ք. Երևան, Մ. Խորենացի 15, բն. 87**
Բնակվող՝ _____
(բնակության հասցեն հաշվառման հասցեի հետ համընկնելու դեպքում տիրույթը չի լրացվում)

ԼԻԱԶՈՐՈՒՄ ԵՄ՝ **Պողոս Պողոսի Պողոսյանին,**
Անձնագիր՝ **AK 0505050, տրված 11.07.2013 թ., 002 -ի կողմից**
Հաշվառված՝ **ՀՀ, Արմավիրի մարզ, գյուղ Ակնալիճ, 16 փողոց, տուն 15**
Բնակվող՝ **ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 52, բն. 52**
(բնակության հասցեն հաշվառման հասցեի հետ համընկնելու դեպքում տիրույթը չի լրացվում)

Հանդես գալ ցանկացած գործով որպես իմ շահերի ներկայացուցիչ Ֆինանսական համակարգի հաշտարարի հետ հարաբերություններում և/կամ «Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ» հիմնադրամում, իմ անունից իրականացնել բոլոր անհրաժեշտ գործողությունները, այդ թվում՝ ներկայացնել պահանջ, հրաժարվել պահանջից, տալ բանավոր և/կամ գրավոր պարզաբանումներ, բացատրություններ, անվերապահորեն և գրավոր ձևով համաձայնվել կամ չհամաձայնվել Հաշտարարի որոշման հետ, ստանալ ինձ հանձնման ենթակա բոլոր ծանուցումները, որոշումները, պահանջի քննության հետ կապված փաստաթղթերի պատճենները, ստորագրել և կատարել բոլոր գործողությունները կապված նշված հանձնարարության հետ: Վերը նշված լիազորությունները կարող են կատարվել ինչպես բոլորը միասին, այնպես էլ առանձին-առանձին:

Հանդես գալ որպես իմ շահերի ներկայացուցիչ **«ԱԲ» ապահովագրական ընկերություն**
(կազմակերպության անվանումը, որի դեմ բերվում է պահանջը)

Իմ անունից իրականացնել Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից քննվող պահանջի հետ կապված բոլոր անհրաժեշտ գործողությունները, այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում կնքել հաշտության համաձայնագիր, Ընկերությանը ներկայացնել և ստանալ փաստաթղթեր, ներկայացնել Ընկերությանը բողոք-պահանջ և այլ նյութեր:

Հավաստում եմ, որ լիազորված անձը հանդիսանում է լրիվ գործունակ անձ: Լիազորագրի բովանդակությունը, էությունը, նշանակությունը, ինչպես նաև իրավական հետևանքները պարզ են և համապատասխանում են իմ ցանկությանը:

Լիազորագիրը տրվում է **6 (վեց) ամիս** ժամկետով՝ առանց վերալիազորման իրավունքի:

ԼԻԱԶՈՐՈՂ՝ _____
(ստորագրություն) (անուն, ազգանուն)